

կրորդ անգամ ուրիշ արտերու հունձքին հետ կը հըն-  
ձուէր (P. T. S. հատ. Բ. էջ 12):

Ըստ աւանդութեան, կ'ըսուի նաև թէ Յիսուս  
տնկած էր այգի մը՝ որուն խաղողը կը հասնէր Պեն-  
տեկոստէին: Յետուի դրքին համաձայն (Ն. 11) Գաղ-  
գաղայի մէջ էր որ առաջին անգամ Իսրայելացիները  
երկրին ցորենէն բազարջ շինելով կերան առաւօտուն,  
ինչպէս դեռ նոր հասած բերքը (նորի): Ամենէն հին  
Նրիքովը շինուած էր Նրուսաղէմի ճանապարհէն զատ-  
ուած՝ մօտը այն աղբիւրին՝ զոր քրիստոնեաները Եղի-  
սէի անուամբ կը կոչէին: Մեծն Հերովդէս այս քա-  
ղաքը զարգարած էր պալատներով, ամփիթատրոնով և  
ձիարչաւարանով. քաղաքին մօտ կար նաև միջնաբերդ  
մը՝ զոր քանդեց Պոմպէոս: Դ. դարուն կործանուած  
էր արդէն այդ գեղեցիկ քաղաքը (Dal. 315-317):

բ) Քառասնեկի Անապատը (Մատ. Դ. 1-2). — Ըստ  
աւանդութեան, Քառասնեկի Անապատ կը կոչուի այն  
տեղը որ կը գտնուի Նրիքովի և Մեռեալ ծովու մի-  
ջեւ, ուր Յիսուս՝ մեր Տէրը կատարեց իր քառասնոր-  
եայ պահնցողութիւնը եւ ուր «վարեցաւ ի Հոգւոյն  
փորձիլ ի սատանայէ»: Քառասնեկի Անապատին ա-  
րևելեան ճակատին վրայ բացուած են 30-40 բնա-  
կան կամ արուեստական քարայրներ՝ ուր երբեմն կը  
բնակէին մենակեացներ: Հարաւային ճակատին վրայ  
ալ կան նման փորուածքներ: Բոլոր քրիստոնեաներու  
աւանդութեան համաձայն՝ մեր Փրկիչը այս քարայր-  
ներուն մէջ կատարած է իր պահնցողութիւնը:

Այն աւանդական քարայրը՝ ուր Յիսուս կատարեց  
իր պահնցողութիւնը, շատ կանուխէն մատուռի վե-  
րածուած է: ԺԳ. դարուն լեցուած է ան, բայց վեր-